ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գավառի պետական համալսարանի մագիստրատուրայում մագիստրոսական թեզի կատարման ընթացքից, ամփոփիչ ատեստավորման կազմակերպման գործընթացից շրջանավարտների բավարարվածության գնահատման արդյունքների վերլուծություն

ԳԱՎԱՌ 2024

Հարցման արդյունքների վերլուծությունը կատարվել է ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից՝ 2024թ. հունիսի 12-ին:

Որակի ապահովման բաժնի պատասխանատուներ՝ Հայրապետյան Ք.

Նախրատյան Մ.

Մուրադյան Ն.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. **Հարցման ընդհանուր նկարագիրը 3**
2. **Հարցման մեթոդաբանությունը 3**
3. **Գավառի պետական համալսարանի մագիստրատուրայում մագիստրոսական թեզի կատարման ընթացքի, ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման վերաբերյալ շրջանավարտների բավարարվածության գնահատում 5**
4. **Եզրակացություններ և առաջարկություններ.....16**

I. Հարցման ընդհանուր նկարագիրը.

Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ նաև ԳՊՀ, Համալսարան) մագիստրատուրայում մագիստրոսական թեզի կատարման ընթացքի, ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման վերաբերյալ շրջանավարտների բավարարվածությունը գնահատելու, վերլուծություն իրականացնելու, ուսման որակը բարելավելու նպատակով Համալսարանի որակի ապահովման բաժնի կողմից ԳՊՀ շրջանավարտների շրջանում իրականացվել է հարցում նախապես մշակված առցանց (online) անանուն հարցաթերթիկի միջոցով:

Հարցման նպատակն է բարելավել ԳՊՀ-ում մասնագետների պատրաստման որակը, շրջանավարտների բավարարվածությունը կրթական ծրագրերից, ամփոփիչ ատեստավորման կազմակերպման գործընթացից:

II. Հարցման մեթոդաբանությունը.

Հարցաթերթը բաղկացած է փակ, բաց, կիսաբաց, ինտերվալային հարցերից: Հարցաթերթի հարցերը մշակվել և կազմվել են ԳՊՀ որակի ապահովման բաժնի աշխատակիցների, դասախոսների և ուսանողների համատեղ աշխատանքի արդյունքում: Հարցաթերթի նպատակն է քանակական և որակական տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը, որը միտված է ԳՊՀ-ում կրթության որակի, դրանով իսկ՝ մասնագետների պատրաստման որակի բարձրացմանը, շահակիցների բավարարվածության աճին:

1. **Գավառի պետական համալսարանի մագիստրատուրայում մագիստրոսական թեզի կատարման ընթացքի, ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման վերաբերյալ շրջանավարտների բավարարվածության գնահատում:**

ԳՊՀ 2023-2024 ուսումնական տարվա մագիստրատուրայի 32 շրջանավարտներից հարցմանը մասնակցել են 21-ը, որը կազմում է մագիստրատուրայի շրջանավարտների 65.62%-ը:

1. Ընդհանուր տեղեկություններ

Հարցմանը մասնակցած շրջանավարտների թվաքանակն՝ ըստ ֆակուլտետների.

Գծապատկեր 1.

Ֆակուլտետը	Շրջանավարտների թիվը	Հարցմանը մասնակիցների թիվը	Հարցմանը մասնակիցների տոկոսային հարաբերությունը
Բնագիտատնտեսագիտական	**17**	**10**	**58.8%**
Հումանիտար մասնագիտությունների	**15**	**11**	**73.3%**
Ընդամենը	**32**	**21**	**65.62%**

Հարցմանը մասնակցած շրջանավարտների թվաքանակն՝ ըստ մասնագիտությունների.

Գծապատկեր 2.

Մասնագիտությունը	**Շրջանավարտների թիվը**	**Հարցմանը մասնակիցների թիվը**	**Հարցմանը մասնակիցների տոկոսային հարաբերությունը**
Բնագիտաընտնտեսագիտական ֆակուլտետ			
Համակարգչային ճարտարագիտություն	2	1	**50%**
Կենսաբանություն	**3**	2	**66.63%**
Տնտեսագիտություն	**2**	1	**50%**
Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	**6**	3	**50%**
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	**4**	3	**75%**
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ			
Իրավագիտություն	6	4	66.6%
Պատմություն	2	2	100%
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	5	4	80%
Հայոց լեզու և գրականություն	2	1	50%

2. Ինչպե՞ս եք ընտրել թեման, ի՞նչն եք հիմնականում հաշվի առել թեման ընտրելիս, ներկայացրեք:

Հարցվողները տվել են հետևյալ պատասխանները.

1. Դեկանատի կողմից հաստատված թեմաների ցանկից ենք ընտրել:
2. Բանահյուսությունը և գրականությունը ինձ ավելի հոգեհարազատ է:
3. Ընտրել եմ ղեկավարիս կարծիքը հաշվի առնելով:
4. Հաշվի եմ առել թեմայի արդիականությունը և կիրառական նշանակությունը:
5. Թեմայի կարևորությունն ու արդիականությունը:
6. Թեման ընտրելիս ինձ հետաքրքրել է, թե սթրեսն ինչպես է ազդում տարբեր հյուսվածքների վրա, և գալարմինը ինչպես է կարգավորում գլյուկոզի յուրացումը օրգանիզմում:
7. Առաջարկվել են թեմաներ, որոնց շարքից ընտրել եմ ինձ հետաքրքրողը:
8. Հաշվի եմ առել հիմնականում թեմայի արդիականությունը և տվյալ թեմայի հետազոտության կարևորությունը:
9. Թեման ընտրելիս հաշվի ենք առել թեմայի արդիականությունը:
10. Թեման ընտրելիս հաշվի են առնվել թեմայի արդիական լինելը և հնարավոր զարգացումները:
11. Հաշվի եմ առել Հայաստանում հիփոթեքային վարկով բնակչությանը բնակարաններով ապահովման կարևորությունը, և այն դժվարությունները, որոնց բախվում է ազգաբնակչությունը վարկը ստանալիս և հետագա մարման ընթացքում:

3. **Խնդրում ենք գնահատել. Որքանո՞վ եք գոհ մագիստրոսական թեզի ղեկավարի աշխատանքից, ինչպե՞ս եք գնահատում ղեկավարի կողմից Ձեզ ցուցաբերված օգնությունը.**

Գծապատկեր 3.



Հարցվողների մեծամասնությունը՝ 86,4%-ը, մագիստրոսական թեզի ղեկավարի աշխատանքը գնահատել է գերազանց, 13,6%-ը՝ լավ, բավարար, անբավարար պատասխաններ չեն գրանցվել:

4. **Հետազոտությունը իրականացնելիս, տվյալները հավաքագրելիս՝ ինչպիսի՞ դժվարություններ ունեցաք, խնդրում ենք նկարագրել.**

Հարցվողները տվել են հետևյալ պատասխանները.

1. Միայն գրականության պակաս:
2. Գրականության ձեռք բերման ժամանակ բախվել եմ դժվարությունների:
3. Թեման իմ մասնագիտության ոլորտում նորություն էր, կար գրականության հայթայթման խնդիր:
4. Հայալեզու գրականություն գրեթե չեմ կարողացել գտնել, օգտվել ենք ռուսերեն գրականությունից:

5. Մի փոքր դժվարություն ներկայացրեց Exel ծրագրով աշխատելը:
6. Դժվարությունները կապված էր տեխնիկական հարցերի հետ, որոնք ընթացքում շտկվեցին:
7. Մեթոդական գրականության պակասն էր դժվարացնում աշխատանքը:
8. Խնդիրներն առաջացան այն ժամանակ, երբ փակվեց ԳՊՀ Բնագիտության լաբորատորյան և ես ստիպված էի մնացած աշխատանքները կատարել ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի «Կիրառական հիդրոէկոլոգիայի» լաբորատորյայում:
9. Դժվարությունները հիմնականում կապված են եղել վերլուծությունների հետ:
10. Հետազոտության ընթացքում առաջացած դժվարությունները կապված էին մասնագիտական գրականության բացակայության հետ:

5. Մագիստրոսական թեզի պատրաստման համար ամբիոնի կողմից տրամադրվե՞լ է արդյոք մեթոդական ուղեցույց և անհրաժեշտ ցուցումներ.

Գծապատկեր 4.



Բոլոր հարցվողները հարցին պատասխանել են «այո»՝ մագիստրոսական թեզի պատրաստման համար ամբիոնի կողմից տրամադրվել է մեթոդական ուղեցույց և ժամանակին տրվել են անհրաժեշտ ցուցումներ:

6. Մագիստրոսական թեզի կատարման ընթացքում ունեցա՞ք անհրաժեշտ մասնագիտական գրականության պակաս.

Գծապատկեր 5.



Հարցվողների 63,6%-ը նշել է «ոչ» պատասխանը, 36,4%-ը՝ «այո» պատասխանը: 36,4%-ը ներկայացնում են «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ», «Տնտեսագիտություն», «Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/», «Պատմություն», «Իրավագիտություն» մասնագիտությունների շրջանավարտները:

7. **Ինչպե՞ս եք գնահատում մագիստրոսական թեզի պաշտպանության կազմակերպման գործընթացը.**

Գծապատկեր 6.



Հարցվողների 72,8%-ը մագիստրոսական թեզի պաշտպանության կազմակերպման գործընթացը գնահատել է գերազանց, 22,7%-ը՝ լավ, 4,5%-ը՝ բավարար, անբավարար պատասխան չի գրանցվել::

Բավարար պատասխանները հիմնականում նշվել են «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բաժնի շրջանավարտների կողմից:

8. Արդյո՞ք համապատասխանում են մագիստրոսական թեզի ղեկավարի, գրախոսի և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գնահատականները.

Գծապատկեր 7.



Հարցվողների 40,9%-ը նշել է, որ ամբողջովին են համապատասխանում են մագիստրոսական թեզի ղեկավարի, գրախոսի և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գնահատականները, 40,9%-ը «համապատասխանում են», 9,1%-ը «ընդհանուր առմամբ համապատասխանում են» պատասխանը, 9,1%-ը «չեն համապատասխանում» պատասխանը:

«Մագիստրոսական թեզի ղեկավարի, գրախոսի և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գնահատականները չեն համապատասխանում» պատասխանը հիմնականում նշվել է «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության շրջանավարտների կողմից:

9. Մինչև ամփոփիչ ատեստավորումը ծանոթացե՞լ էիք գրախոսի կարծիքին.

Գծապատկեր 8.



Հարցվողների 95,5%-ը նշել է «այո» պատասխանը, 4,5%-և «ոչ» պատասխան: Ոչ պատասխան նշել է «Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի»/ մասնագիտության մեկ շրջանավարտ:

10. Պահանջե՞լ եք ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովից լրացուցիչ մեկնաբանություններ Ձեր գնահատականի վերաբերյալ.

Գծապատկեր 9.



Հարցվողների 100%-ը նշել է, որ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովից լրացուցիչ մեկնաբանություններ գնահատականի վերաբերյալ չի պահանջել:

11. Տեղյա՞կ եք արդյոք ամփոփիչ ատեստավորման արդյունքի բողոքարկման ընթացակարգին.

Գծապատկեր 11.



Հարցվողների 72,7%-ը նշել է, որ տեղյակ է ամփոփիչ ատեստավորման արդյունքի բողոքարկման ընթացակարգին, 27,3%-ը նշել է «ոչ» պատասխանը: «Ոչ» պատասխան հիմնականում նշվել են «Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Կենսաբանություն», «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտության շրջանավարտների կողմից:

12. **Հարցվողները ներկայացրել են իրենց առաջարկությունները, նկատառումները, դիտողությունները՝ ամփոփիչ ատեստավորման գործընթացը բարելավելու նպատակով.**
    1. Գրախոսի կարծիքը ևս հաշվի առնվի, և կախված չլինի միայն այդ պահին պատասխանելուց:
    2. Կցանկանայի, որ ավելի երկար ժամանակ տրամադրվի, իրականացրած հետազոտությունն ավելի մամրամասն ներկայացնելու համար:
    3. Ցանկալի է, որ մագիստրոսական թեզի ղեկավարները չընդգրկվեն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմում:
    4. Ավելի բարձր գնահատվեն այն ուսանողները, ովքեր իրենց աշխատանքում ունեն փորձնական մաս:
    5. Առաջարկում ենք՝ մագիստրոսական թեզի ղեկավարին նշանակել ըստ ուսանողի ցանկության և թեմայի նախընտրելի ուղղության:
    6. Մագիստրոսական թեզի պաշտպանության ժամանակ ցանկալի է, որպեսզի հարցեր տրվեն:
    7. Ուսանողին հարցեր ուղղել պաշտպանությունից հետո:
    8. Ղեկավարները սրտացավ աշխատանք իրականացնեն ուսանողների հետ:

IV. Եզրակացություններ և առաջարկություններ.

Ամփոփելով հարցման արդյունքները՝ կարող ենք նշել, որ հարցմանը մասնակցել են 2023-2024 ուսումնական տարվա մագիստրատուրայի շրջանավարտների 65,62%-ը, հետևաբար հարցման արդյունքները ներկայացնում են մագիստրատուրայում մագիստրոսական թեզի կատարման ընթացքի, ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման վերաբերյալ շրջանավարտների բավարարվածության գնահատման հնարավորինս ամբողջական պատկերը:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ հարցվողների մեծ մասը մագիստրոսական թեզի թեման ընտրել են 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակում՝ նախապես ամբիոնի կողմից հաստատված մագիստրոսական թեզի թեմաների ցանկից՝ հիմք ընդունելով թեմայի արդիականությունը, ուսումնասիրվածության աստիճանը:

Հարցվողներն ընհանուր առմամբ բավարարված են Համալսարանում ամփոփիչ ատեստավորման կազմակերպման գործընթացից, տեղյակ են, որ ԳՊՀ-ում գործում է ամփոփիչ ատեստավորման արդյունքի բողոքարկման ընթացակարգ, մինչ ամփոփիչ ատեստավորումը նախապես ծանոթացել են գրախոսի կարծիքին:

«Հետազոտությունը իրականացնելիս, տվյալները հավաքագրելիս՝ ինչպիսի՞ դժվարություններ ունեցաք և արդյո՞ք մեթոդական ուղեցույց և անհրաժեշտ ցուցումներ տրվել է նախապես» հարցին հարցվողների մեծամասնությունը նշել են, որ մագիստրոսական թեզի պատրաստման համար ամբիոնի կողմից ժամանակին տրամադրվել է մեթոդական ուղեցույց, և տրվել են անհրաժեշտ ցուցումներ, սակայն առկա է եղել մասնագիտական հայալեզու գրականության պակաս: Մասնագիտական գրականության պակաս հիմնականում նկատվել է «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ», «Տնտեսագիտություն», «Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/», «Պատմություն», «Իրավագիտություն» մասնագիտությունների շրջանավարտների մոտ:

Գավառի պետական համալսարանի մագիստրատուրայում մագիստրոսական թեզի կատարման ընթացքի, ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման վերաբերյալ՝ շրջանավարտների բավարարվածության գնահատման արդյունքներն ամբողջովին ուսումնասիրելու և վերլուծելություն իրականացնելու համար կարևոր են նաև որակական բաց հարցերը:

Հարցվողների մեծամասնությունն **‹‹Առաջարկություններ, նկատառումներ, դիտողություններ››** բաժնում հիմնականում նշել են հետևյալ առաջնահերթությունները.

1. Ցանկալի է, որ մագիստրոսական թեզի ղեկավարները չընդգրկվեն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմում:
2. Ավելի բարձր գնահատվեն այն ուսանողները, ովքեր իրենց աշխատանքում ունեն փորձնական մաս:
3. Առաջարկում ենք՝ մագիստրոսական թեզի ղեկավարին նշանակել ըստ ուսանողի ցանկության և թեմայի նախընտրելի ուղղության:
4. Մագիստրոսական թեզի պաշտպանության ժամանակ ցանկալի է, որպեսզի հարցեր տրվեն:
5. Ղեկավարները սրտացավ աշխատանք իրականացնեն ուսանողների հետ:

<u>Ամփոփելով հարցման արդյունքները՝ ԳՊՀ որակի ապահովման բաժինը ներկայացնում է հետևյալ առաջարկությունները.</u>

1. Գրադարանը պարբերավար համալրել մասնագիտական գրականությամբ:
2. Ֆակուլտետները և ամբիոնները հետևողական աշխատանք իրականացնեն՝ մագիստրոսական թեզերի գիտական ղեկավարների աշխատանքը վերահսկելու և գործընթացն ավելի արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ:

Գավառի պետական համալսարանում մագիստրատուրայում մագիստրոսական թեզի կատարման ընթացքի, ամփոփիչ ատեստավորման

գործընթացի կազմակերպման վերաբերյալ՝ շրջանավարտների բավարարվածության գնահատման արդյունքների վերլուծությունը, եզրակացություններն ու առաջարկությունները հղվել են համապատասխան ստորաբաժանումներ (ֆակուլտետներ, ամբիոններ), որպեսզի ուսումնասիրվեն, ԳՊՀ ռեկտորատի, ապա գիտական խորհրդի նիստերում ներկայացվեն համապատասխան լուծումներ և առաջարկություններ, ձեռնարկվեն միջոցներ՝ ուսուցման և ուսումնառության արդյունավետության ապահովման, ԳՊՀ-ում մասնագետների պատրաստման որակի բարձրացման և արդյունքում՝ շրջանավարտների գոհունակությանն արժանանալու նպատակով: